Թուրքերի փողոցի մէջտեղումն էինք, երբ մի խումբ մահմեդական երեխաներ, մեզ տեսնելով, սկսեցին իրանց սովորական երգը: — Դա կռոի հրաւէրքն էր:

— Տղերք, — ասաց Կարօն, — չվախենաք, հէնց որ նշան կը տամ, սկսեցեք...

Մահմեդական երեխաների խումբը մօտեցաւ, մեր ճանապարհը կտրեց:

— Թողէք, որ անցնենք, — ասաց Կարօն:

— Չենք թողնի, մինչեւ ձեզ մօտ գտնուած սպիտակ թղթերը մեզ չտաք, — ասաց նրանցից մէկը:

— Ոչինչ չէք ստանայ, — պատասխանեց Կարօն:

Մահմեդական երեխաները սովորութիւն ունէին մեր ձեռքից խլել մեր գրելու թղթերը եւ երբեմն յափշտակում էին մեր գրքերը. թէեւ այս վերջիններ-ը նրանց պէտք չէին, բայց քանի օրից յետոյ դարձնում էին, փոխարէնը ստանալով փող, կամ մի ուրիշ բան: Մի անգամ իմ Նոր կտակարանը, որ գերի էր ընկած մի թուրք երեխայի ձեռքում, ես կարողացայ ազատել, նրան տալով իմ զմելին: Ո՞վ էր սովորեցրել նրանց, թէ նրանք իրաւունք ունէին յափշտակելու հայ երեխաների իրեղէնները...

Իսկ այս անգամ նրանց պահանջը հանդիպեց սաստիկ ընդդիմադրութեան: Երբ Կարօն պատասխանեց, թէ «ոչինչ չէք ստանայ», այդ միջոցին մահմեդականներից մէկը վրայ պրծաւ եւ խլեց նրա գդակը: Կարօն մի հարուածով ցած գլորեց անզգամին եւ խլեց գդակը: Առաջին անգամն էր, որ մահմեդական երեխաները տեսան «գաւուրի» հարուածը եւ՝ այդ յանդգնութիւնը սաստիկ բարկացրեց նրանց:

— Սպանեցե՛ք... — ձայն տուեցին միմեանց:

— Սկսեցե՛ք... — ասաց մեզ Կարօն:

Ես երբեք չեմ մոռանայ այն փոքրիկ, երեխայական կռիւը, որ սկսուեցաւ մեր եւ նրանց մէջ: Սկզբում մահմեդականները փոքր էին թուով, բայց մի այնպիսի վայրենի ճիչ եւ աղաղակ բարձրացրին, որ նրանց ձայնից մի քանի րոպէի մէջ հաւաքուեցաւ այնքան բազմութիւն, որի թիւը մեր կրկնապատիկը եղաւ: Բայց ես չգիտեմ, ի՞նչ էր պատճառը, որ կռոի մէջ մեզ տիրեց մի այնպիսի կատաղութիւն, որ բոլորովին մոռացանք, թէ մենք հայի զաւակներ ենք, թէ մեր բազուկները կապուած են, թէ մենք համարձակութիւն չի պիտի ունենանք մահմեդականի վրայ բարձրացնելու, մեր «պիղծ» եւ միշտ անգործութեան դատապարտուած – ձեռքը: Կարօն մի սարսափելի փոթորիկի